ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ "Պայմանավորվող կողմեր"),

գիտակցելով առողջապահության եւ բժշկագիտության բնագավառում միջազգային համագործակցության եւ երկկողմ հարաբերությունների ամրապնդման կարեւորությունը,

ցանկանալով պատշաճ պայմաններ ստեղծել հավասարության վրա հիմնված համագործակցության զարգացման համար

եւ գիտակցելով երկկողմ հարաբերությունների համար իրավական հիմք ստեղծելու անհրաժեշտությունը,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Պայմանավորվող Կողմերը, օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում, կխրախուսեն առողջապահության եւ բժշկագիտության բնագավառում երկկողմ համագործակցությունը՝ նպատակ ունենալով հզորացնել միմյանց առողջապահական համակարգերը եւ աջակցել Պայմանավորվող Կողմերի բնակչության առողջապահական պայմանների բարելավմանը:

ՀՈԴՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն փոխադարձ համագործակցությանը հետեւյալ ոլորտներում՝

- առողջապահության համակարգի բարեփոխում,
- բժշկական սպասարկում,
- հանրային առողջության պահպանում եւ զարգացում,
- բժշկագիտական հետազոտություն,
- դեղագիտություն,
- Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված համագործակցության այլ ուղղություններ:

ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերի փոխգործակցությունը 2-րդ հոդվածում նշված ոլորտներում կիրականացվի, մասնավորապես, հետեւյալ ձեւերով՝
- ստանդարտ աշխատանքային շփումներ,

- բաձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններ,

- նյութերի եւ փաստաթղթերի առաքում (հրապարակումներ, ուսումնասիրություններ),

- փորձառության, տեղեկատվության, վիճակագրության, առողջապահության ոլորտի օրենսդրության եւ լավագույն փորձի փոխանակում,

- Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված փոխգործակցության այլ ձեւեր:

ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում կնպաստեն միմյանց առողջապահական հաստատությունների եւ կազմակերպությունների միջեւ ուղղակի կապերի հաստատմանը եւ համագործակցությանը:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրը կկիրարկվի Պայմանավորվող Կողմերի պետությունների տարածքներում գործող օրենսդրության համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից, որով Պայմանավորվող Կողմերը միմյանց կտեղեկացնեն դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերն ավարտելու մասին:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ կարող է փոփոխվել կամ լրացվել Պայմանավորվող կողմերի գրավոր համաձայնությամբ: Սույն Համաձայնագրի լրացումները կամ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը դիվանագիտական ծանուցման ճանապարհով: Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը մյուս Պայմանավորվող կողմին դադարեցման մասին ծանուցումը ներկայացնելու օրվանից 6 (վեց) ամիս հետո:

Կատարված է Պրահայում 2014թ. հունվարի 30-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չեխերեն եւ անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերի մեկնաբանման վերաբերյալ տարաձայնությունների դեպքում, նախապատվություն կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. մայիսի 27-ին